ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ. Լեռնապատ 27փ. 7/6
հեռախոս 0322 68781, էլ. փոստ Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11» դեկտեմբերի 2014 թվականի N60-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ՑՈՒՑԱԿԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 12 կետով

Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է .

Հիմք ընդունելով << Լեռնապատ համայնքի բնակարանաշինության հարցերն ուսումնասիրող հանձնաժողովի>> հաշվետվությունը, դիմել Լոռու մարզպետին <<Լեռնապատ համայնքի բնակարանաշինության հարցերն ուսումնասիրող հանձնաժողովի>> ուսումնասիրության ընթացքում առաջացած հարցերի լուծման գործում օգնություն ցուցաբերելու համար:

Կից ներկայացվում է << Լեռնապատ համայնքի բնակարանաշինության հարցերն ուսումնասիրող հանձնաժողովի>> հաշվետվությունը:

Առդիր 1 էջ:

ամայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ՍԵՐՅՈԺԱ ԱԲԱԶՅԱՆ			
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ			
ԱՐԿԱԴԻ ԱԲԱԶՅԱՆ			
ՄՀԵՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ			

Լեռնապատ համայնքի ղեկավար՝ **Ս. Աբազյան**

Ավագանու հարգելի անդամներ

Լեռնապատ համայնքի բնակարանային պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովը հիմ
ընդունելով համայնքի ավագանու 24.09.2014թ. որոշումը և համայնք բազմաթիվ բնակիչներից ստացվ
դիմում-բողոքները, որոնք վերաբերվում են իրենց բնակարանային պայմաններին(այսինքն այն հարցի
որ մինչև հիմա շատերը չգիտեն, թէ իրենք ընգրկված են համայնքի բնակարանաշինությ
ցուցակներում թէ ոչ, իսկ եթե ոչ, ապա որն է իրենց դուրս մնալու պատճառները), կատարելո
բնակարանաշինության համար կազմված գործերի և ցուցակների ուսումնասիրություններ, պարզվ
հետևյալը՝

ա/. Ամենակարևորը, որ մարդիկ իրազեկված չեն եղել: Այսինքն, խախտելով օրենքի պահանջները, ա
ցուցակները փակցված չեն եղել տեսանելի վայրում և մարդիկ գրավոր չեն տեղեկացվել:

բ/. Եթե երկրաշարժից հետո պետք է Լեռնապատում կառուցվեր «իքս» քանակի բնակարանն
ստացվում է, որ այդ քանակի տները կառուցվում են, իսկ այդ ցուցակներից բազմաթիվ բնակիչներ, որոն
տուն են կորցրել չկան ցուցակներում(ինչ մարդկանց հաշվին է լրացվել ցուցակը): Օրինակ՝ Միկինյա
Խաչիկանք կորցրել են մեկ տուն, բայց ստացել են մի քանիսը: ՈՒ Էլի կան: ՈՒ չկա որևէ կոնկրե
փաստաթուղթ, թէ քանի մարդ է տուն կորցրել, ով է կորցրել:

գ/. Լեռնապատում տներ սկսել են կառուցվել սկսած 1990թ-ից, երբ որոշում կայացվեց, որ գյուղը պետք
տեղափոխվի նոր վայր(ավելի սեյսմակայուն): Բոլոր բնակիչները պետք է իրենց կորցրա
բնակարանների դիմաց ստանային նոր տուն նոր վայրում: Սկսվեց այսքան տարիներ տևո
բնակարանաշինությունը: Սակայն 2011 թվականին, երբ արդեն կառուցվել էր բազմաթիվ թվ
բնակարաններ ինչ որ մեկի հոգատարության շնորհիվ գյուղում որոշ տների համար սկսում են կիրառ
վթարայնության աստիճանները և շատ բնակիչներ այդ պատճառով դուրս են մնում, այն դեպքում եր
գյուղում շատ ավելի բարվոք վիճակում գտնվող տների տնատերեր ստացել էին նոր բնակարաններ:
Մեր կարծիքով այս դուրս մնացած բնակիչների համար պատճառը միայն մեկն է՝ նախկին գյուղապետ
ընտրողները չեն:

դ/. բնակարանաշինությանը վերաբերող թղթապանակներում կա նաև Լոռու նախկին մարզպետի մ
գրություն, որով նա առաջարկում է ցուցակներից հանել որոշ բնակիչների, որի իրավունքը մե
կարծիքով նա չունի, քանի որ ցուցակները կազմում է միայն գյուղապետը և ինքն է պատասխանատո
այդ ցուցակների համար:

ե/. Այն, որ ցուցակները կազմվել են թերություններով և կամայականորեն(ինչպես ուզել և ում ուզել են
ցույց է տալիս այն հանգամանքը, որ որոշ բնակիչներ դատարանի օգնությամբ արդեն իսկ վերականգնե
են ցուցակներում, որոշ գործեր էլ դատական պրոցեսի ընթացքի մեջ են:
Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլորն են ի վիճակի դիմել դատարան(ֆինանսապես
կապված տարիքի հետ), ուստի և մենք խնդրում ենք ավագանուն, որպես ժողովրդի ընտրյալներ օրենք
սահմաններում դիմել վերադաս մարմիններին, մեր համայնքում բնակարանաշինության հարցը մե
անգամ ևս ուսումնասիրելու և արդարությունը վերականգնելու համար:

Բնակարանաշինության հարցերով հանձնաժողով՝

Ապրես Ոսկանյան

Վահրամ Աշրաֆյան

Բորիս Աշրաֆյան

Արայիկ Քոչարյան

Սերյոժա Աբազյան

15.11.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, հասցե գ. Լեռնապատ 27փ. 7/6
հեռախոս 0322 68781, էլ. փոստ Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 11» դեկտեմբերի 2014 թվականի N61 -Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՎՈՒ 21.11.2014 ԹՎԱԿԱՆԻ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N47 –Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Լեռնապատ համայնքի ավագանին ***որոշում է.***

Լեռնապատ համայնքի ավագանու 21.11.2014թ.-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Լեռնապատ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> N47 –Ա որոշման հավելվածի 3 կետի <<համայնքի բյուջեով նախատեսված եկամուտների 50%-ը>> բառերը փոխարինել <<համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի մինչև 50%-ը>> բառերով:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
ՍԵՐՅՈԺԱ ԱԲԱԶՅԱՆ			
ԱՐԱՅԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ			
ԱՐԿԱԴԻ ԱԲԱԶՅԱՆ			
ՄՀԵՐ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ			

Լեռնապատ համայնքի ղեկավար՝ _____ Ս. Աբազյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)